

Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն

Ծրագրի համարը՝ 42145
Հուլիս-դեկտեմբեր 2016թ.

**Հայաստան: Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցքի Ներդրումային Ծրագիր
Տրանշ 3
(Ֆինանսավորվում է ԱԶԲ-ի կողմից)**

Կազմվել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» (ՕԻԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կողմից՝ հիմնվելով Ծրագրի կառավարման խորհրդատուի (ՕԿԽ) բնապահպանական մշտադիտարկման ամսական հաշվետվությունների վրա:

Բովանդակություն

Մաս I Ներածություն	5
1. Շինարարական աշխատանքները և Ծրագրի առաջընթացը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	6
1.1 Թալին-Լանջիկ ճանապարհահատված Մ1 Թալին-Գյումրի ճանապարհ (կմ 71+500-կմ 90+200)	6
1.2 Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի 9 ուղեանցերի վերակառուցում/ կառուցում/ վերանորոգում (Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ)	7
2. Բնապահպանական անվտանգության համակարգի աշխատակազմ	8
2.2 ԾԻԿ արտաքին ազդեցության և վերաբնակեցման բաժին	9
2.3 Թալին-Լանջիկ ճանապարհահատված	10
2.3.1 ԾԿԽ Բնապահպանական անվտանգության բաժին	10
3. Բնապահպանական Անվտանգության Համակարգի Ծրագիր	13
3.1 Համապատասխանություն ազգային անվտանգության համակարգի հետ	13
3.2 Համապատասխանություն ԱԶԲ Անվտանգության Համակարգի հետ	13
3.3 Կապալառուի համապատասխանությունը ՇՄԿՊ-ի հետ	14
3.4 Հանքերի, պայթեցման աշխատանքների, հանված անօգտագործելի նյութի տեղադրման և հողի բերրի շերտի կուտակման վայրերի, բետոնի գործարանների և պատմական հուշարձանների համար տեղանքին բնորոշ բնապահպանական կառավարման պլանների հաստատումներ	15
3.5 ԱԶԲ Առաքելություն	17
3.6 Վերապատրաստման դասընթացներ և իրազեկվածության բարձրացման ուղղվածություն 18	
3.7 Հնագիտական աշխատանքների ծրագիր (Թալին-Լանջիկ ճանապարհահատված)	19
3.8 Բողոքների լուծման մեխանիզմ և խորհրդատվություն	20
3.9 Կապ	23
Մաս III Բնապահպանական մոնիթորինգ	25
4. Մոնիթորինգ	25
4.2 ՇՄԿՊ-ի հետ համապատասխանության մոնիթորինգ	25
4.3 Սարքավորումներով չափումներ և օդի որակի, աղմուկի և վիբրացիայի, ջրի որակի բնապահպանական պարամետրերի մոնիթորինգ	28
4.3 Անհամապատասխանության ծանուցումներ	29
Եզրակացություններ և առաջարկություններ	30

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Բնապահպանական թույլտվությունների և լիցենզիաների կարգավիճակ

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. Հաշվետու ժամանակաշրջանում մոնիթորինգ այցերի ընթացքում հայտնաբերված անհամապատասխանություններ

ՀԱՎԵԼՎԱԾ Գ. Աղմուկի, փոշու և վիբրացիայի գնահատման քաղվածքներ, Սկզբնական պայմանների վերաբերյալ ելակետային No1 հաշվետվություն

ՀԱՎԵԼՎԱԾ Դ. ՀՀ մշակույթի նախարարության թույլտվությունը Լանջիկ հնագիտական համալիրի վերաբերյալ, կմ86+000-կմ89+740 և կմ90+900-կմ91+900 ճանապարհահատվածների համար

Հապավումների ցանկ

ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ԿՇՄԿՊ	Կապալառուի Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԿՊ	Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՆԲԳ	Նախնական բնապահպանական գնահատում
ԲՄ	Բնապահպանության գծով մասնագետ
ԾԻԿ	Ծրագրի իրականացման կազմակերպություն
ԲՖԳ	Բազմափուլային ֆինանսական գործիք
ԲՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն
ՏԿԻՏՆ	ՀՀ տրանսպորտի, կապի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների նախարարություն
ՄՆ	ՀՀ մշակույթի նախարարություն
ՏՇՄԿՊ	Տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի կառավարման պլան
ԵԿՊ	Երթևեկության կառավարման պլան
ԲՄՀ	Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն

Մաս I Ներածություն

Մույն Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվությունն ընդգրկում է 2016թ-ի հուլիսից դեկտեմբեր ժամանակահատվածը:

Հաշվետվությունը պատրաստվել է ԾԿԽ-ի հետ սերտ համագործակցությամբ, որը «Սպեա Ինջինիերինգ» և «ԱյԱրԴի Ինջինիերինգ» ընկերությունների համատեղ ձեռնարկությունն է:


1. Հայաստանի Հանրապետությունը ընտրել է Բավրա-Երևան-Ագարակ երթուղին որպես հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մաս, որը պետք է վերականգնվի, վերակառուցվի և լայնացվի և նշանակել է ՀՀ տրանսպորտի, կապի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների նախարարության (ՏԿԻՏՆ) «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» ՊՈԱԿ-ին (ՀՀՃԾ ԾԻԿ ՊՈԱԿ) որպես աշխատանքների համակարգող:

2. Բազմափուլ ֆինասավորման գործիքի շրջանակներում (ԲՖԳ) նախատեսված է հյուսիսից հարավ ձգվող ազգային ճանապարհների վերականգնման և արդիականացման համար՝ նոր ընդլայնված Հյուսիս-Հարավ մայրուղու նպատակով: Հիմնական նպատակն է՝ ընդլայնել առկա երկուղի ճանապարհները (հիմնականում ոչ բարվոք վիճակում)՝ վերածելով քառուղի ճանապարհների հնարավորության դեպքում գոյություն ունեցող ծրագրերի երկայնքով կամ կառուցելով նոր այլընտրանքային երկուղի ճանապարհներ այն հատվածներում, որտեղ մեկ քառուղի ճանապարհը հնարավոր չի լինի կառուցել:

3. ԲՖԳ-ի շրջանակներում Ասիական զարգացման բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է վարկ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» իրականացման համար՝ Մ1 Թալին-Գյումրի ճանապարհի Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի (կմ71-500-կմ90+200) վերակառուցման և բարելավման աշխատանքներն իրականացնելու համար:

4. Տրանշ 3-ը սկսվում է Թալին համայնքում կմ 71+500 և ավարտվում՝ Լանջիկ համայնքի մոտ կմ 90+200 (ճանապարհի երկարությունը՝ մոտ 18.7կմ): Այս ճանապարհը ներկայումս II-րդ կատեգորիայի ճանապարհ է և ունի 2 հակառակ ուղղություններով երթևեկություն: Վերակառուցումից հետո ակնկալվում է, որ այս ճանապարհահատվածը կդառնա բետոնյա ծածկով I-ին կատեգորիայի ճանապարհ:

5. Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհներում 9 ուղեանցերի կառուցման աշխատանքները ֆինանսավորում են Տրանշ 3-ի միջոցների խնայողություններով: Այս աշխատանքներն իրականացվում են տեղական կապալառուների կողմից, իսկ վերահսկողությունն իրականացվում է Տրանշ 3-ի Ծրագրի կառավարման խորհրդատուի կողմից:



Տրանշ 3 Թալին-Գյումրի
ճանապարհային միջանցք

Թալին-Լանջիկ
ճանապարհային միջանցք

Պատկեր 1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 3

1. Շինարարական աշխատանքները և Ծրագրի առաջընացը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացվել են հետևյալ շինարարական գործողությունները.

1.1 Թալին-Լանջիկ ճանապարհահատված Ս1 Թալին-Գյումրի ճանապարհ (կմ 71+500- կմ 90+200)

1.1.1 Ճանապարհահատվածի վերակառուցման և բարելավման աշխատանքները իրականացվում է «Սինոհիդրո Կորպորեյշն» ՍՊԸ-ի, շինարարության վերահսկողությունն իրականացվում է «Սպեա Ինջինիերինգ» և «ԱյԱրԴի Ինջինիերինգ» կոնսորցիում համատեղ կազմակերպության կողմից:

1.1.2 Շինարարական աշխատանքների մեկնարկի ամսաթիվն է՝ 2016թ. հուլիսի 22-ը:

1.1.3 Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Սինոհիդրո Կորպորեյշն» ՍՊԸ-ի և «Սթոնս» ՍՊԸ ենթակապալառուի կողմից:

1.1.4 Կատարվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝

- Գրունտի հանույթ,
- Ժայռային բնահողի հանույթ,
- Շինարարության տարածքի մաքրում,
- Հիմքի և ենթահիմքի նախապատրաստում,
- Ջրթող կառուցվածքների կառուցում,
- Լիցքի կառուցում:

1.1.5 Անվտանգության/ապահովության նպատակներով տեղադրվել են երթևեկության կարգավորման նշաններ/ազդանշաններ և իրականացվել են ճանապարհների պահպանման աշխատանքներ:

1.2 Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի 9 ուղեանցերի վերակառուցում/կառուցում/ վերանորոգում (Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ)

1.2.1 Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհներում 9 ուղեանցերի վերակառուցման աշխատանքներն իրականացվում են տեղական կապալառուների, իսկ վերահսկողությունը՝ «Սպեա Ինջինիերինգ» և «ԱյԱրԴի Ինջինիերինգ» կոնսորցիում համատեղ կազմակերպության կողմից: 9 ուղեանցերի կառուցման աշխատանքները ֆինանսավորվում է Տրանշ 3-ի ֆինանսական միջոցների խնայողություններից:

1.2.2 Ուղեանց Մ2 կմ13+029, Այնթափ և Մասիս քաղաքներ. Տեղական կապալառու է «Արարատ Ճանշին» ՍՊԸ և «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ համատեղ ձեռնարկությունը: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝

- Շինարարության տարածքի մաքրում,
- Ճանապարհի փակում և զգուշացնող նշանների տեղադրում,
- Ասֆալտե ծածկի քանդում և հեռացում շին հրապարակից,
- Պաշտպանիչ երկաթբետոնե շերտի և երկաթբետոնե սալաքարերի քանդում ու մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում,
- Հողային աշխատանքներ,
- հիմքի նախապատրաստում ,
- հիմքի շեղերի ամրացում,
- Բետոնային աշխատանքներ,
- հենարանների տեղադրում:

1.2.3 Ուղեանց Մ2 կմ21+800 (Մ2 Երևան-Արտաշատ), Արաքսավան և Դիմիտրով համայնքներ. Տեղական կապալառու է «Դորոժնիկ» ՍՊԸ և «Հայկ-Շին» համատեղ ձեռնարկությունը: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝

- Շինարարական տարածքի մաքրում,
- Ճանապարհի փակում և զգուշացնող նշանների տեղադրում,
- Ասֆալտե ծածկի քանդում և հեռացում շին հրապարակից,
- Պաշտպանիչ երկաթբետոնե շերտի և երկաթբետոնե սալաքարերի քանդում ու մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում,
- Հողային աշխատանքներ,
- հիմքի նախապատրաստում,

- հիմքի շեղերի ամրացում,
- Բետոնե աշխատանքներ,
- Միջանկյալ և եզրային երկաթբետոնե հենարանների տեղադրում

1.2.4 Ուղեանցեր U2 կմ10+943 Այնթափում, U2 կմ22+850 Մասիսում, U2 կմ25+630 Ազատավանում, U1 կմ21+550 Աշտարակում (U1 Երևան-Աշտարակ). Տեղական կապալառուն է «Մոնտագետորանշին» ՓԲԸ-ը: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝

- Շինարարության տարածքի մաքրում,
- Ճանապարհի փակում և զգուշացնող նշանների տեղադրում,
- Ասֆալտե ծածկի քանդում և հեռացում շին հրապարակից,
- Պաշտպանիչ երկաթբետոնե շերտի և երկաթբետոնե սալաքարերի քանդում ու մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում,
- Հողային աշխատանքներ (հանույթ և լիցք)
- հիմքի նախապատրաստում,
- հիմքի շեղերի ամրացում,
- Բետոնե աշխատանքներ,
- Միջանկյալ և եզրային երկաթբետոնե սյուների տեղադրում,

1.2.5 Ուղեանցեր U2 կմ15+444 Մասիսում և Մարմարաշենում, U2 կմ24+147 Բուրաստանում, U2 կմ28+900 Արտաշատում. Տեղական կապալառուն է «Սահակյանշին» ՓԲԸ-ը: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝


- Շինարարության տարածքի մաքրում,
- Ճանապարհի փակում և զգուշացնող նշանների տեղադրում,
- Ասֆալտե ծածկի քանդում և հեռացում շին հրապարակից,
- Պաշտպանիչ երկաթբետոնե շերտի և երկաթբետոնե սալաքարերի քանդում ու մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում,
- Հողային աշխատանքներ,
- Խրամուղու նախապատրաստում,
- Խրամուղու շեղերի ամրացում,
- Բետոնե աշխատանքներ
- Միջանկյալ և եզրային երկաթբետոնե սյուների տեղադրում,

2. Բնապահպանական անվտանգության համակարգի աշխատակազմ

2.1.1 Ծրագրի իրականացման կազմակերպությունը կատարում է ծրագրի իրականացման կառավարում օրական կտրվածքով: ԾԻԿ-ը ներառում է Սոցիալական և բնապահպանական բաժին, որի պատասխանատվությունների թվում են ծրագրի բոլոր բնապահպանական հարցերի կառավարումը:

2.1.2 Ծրագրի կառավարման խորհրդատուն/Ինժեները ԾԻԿ-ին Տեխնիկական աջակցություն է տրամադրում՝ ծրագրի կառավարման և հաշվետվողականության հարցերում: ԾԿԽ-ի Շրջակա միջավայրի անվտանգության բաժինը պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկողության՝ բնապահպանական և հնագիտական ազդեցության տեսանկյունից, և մասնավորապես, Կապալառուի կողմից ՇՄԿՊ-ի իրականացման վերահսկման և հաշվետվողականության համար:

2.1.3 Շինարարական աշխատանքները իրականացնում են կապալառուները: Կապալառուի բնապահպանության բաժինը պատասխանատու է ՇՄԿՊ-ի մշակման և իրականացման, շինարարական աշխատանքների մոնիթորինգի և հաշվետվողականության համար:



2.2 ԾԻԿ արտաքին ազդեցության և վերաբնակեցման բաժին

2.2.1 Արտաքին ազդեցության և վերաբնակեցման աշխատանքները ստանձնել են արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգողը; Սոց. անվտանգության մասնագետը և Բնապահպանության մասնագետները.

Գևորգ Աֆյան - Արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգողը պատասխանատու է ծրագրի բնապահպանական, վերաբնակեցման և սոցիալ կառավարման համար:

Սոնա Պողոսյան - Սոց. անվտանգության մասնագետը պատասխանատու է Ծրագրի համապատասխանության համար ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը:

Մարիամ Բաղդեյան - Բնապահպանության և հնագիտության մասնագետը պատասխանատու է Ծրագրի համապատասխանության համար ԱԶԲ-ի Բնապահպանության քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը: Աշխատում է կես դրույքով:

Տիգրան Օգանեզով- Բնապահպանության և հնագիտության մասնագետը պատասխանատու է Ծրագրի համապատասխանության համար ԱԶԲ Բնապահպանության քաղաքականությանը, ԵՆԲ-ի Բնապահպանության քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը: Աշխատում է կես դրույքով:

2.3 Թալին-Լանջիկ ճանապարհահատված

2.3.1 ԾԿԽ Բնապահպանական անվտանգության բաժին

Ներկայումս ԾԿԽ Բնապահպանական անվտանգության բաժնի կազմում ընդգրկված են՝

Էդիտա Վարդգեսյանը՝ Բնապահպանության մասնագետ (ԲՄ), ստանձնել է ճանապարհահատվածի բնապահպանությանն առնչվող հարցերի պատասխանատվությունը, ապահովում է կապալառուի համապատասխանությունը պայմանագրով սահմանված բնապահպանական հարցերի մեղմացման միջոցառումներին և բնապահպանությանը վերաբերող ՀՀ օրենսդրությանը, մոնիթորինգին և հաշվետվողականությանը:

Բորիս Գասպարյանը՝ Հնագիտության մասնագետը (ՀՄ) պատասխանատու է ճանապարհահատվածում առկա հնագիտական հարցերի վերաբերյալ խորհրդատվության, շինարարական աշխատանքների և Հայաստանի հնագիտությանը վերաբերող օրենսդրության միջև փոխհամապատասխանության, հանք կատարված ստուգայցերի, թափոնների կուտակման և բետոնի գործարանի տարածքների համար՝ հնագիտական գնահատման նպատակներից ելնելով:

2.3.2 Կապալառուի Առողջության և անվտանգության, բնապահպանության, հնագիտության և սոցիալական հարցերի բաժին (ԱԱԲՀՄ)

Բաժինը կազմված է 5 անդամներից՝

Պրն. Լիու Մինգջիան՝ Բաժնի ղեկավարը պատասխանատու է բաժնի ընդհանուր կառավարման համար:

Միքայել Թևոսյան՝ Բնապահպանության գծով մասնագետը աջակցում է ԱԱԲՀՄ բաժնի ղեկավարին շրջակա միջավայրի կառավարման պլանի իրականացման համար:

Արևիկ Սինդոյան՝ Սոցիալական ազդեցության մասնագետը պատասխանատու է սոցիալական հարցերին առնչվող Կապալառուի գործողությունների համապատասխանության ապահովման համար ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը:

Աշոտ Ռեվազյան՝ Անվտանգության և առողջապահության մասնագետը պատասխանատու է անվտանգության և առողջապահության հարցերին առնչվող Կապալառուի

գործողությունների համապատասխանության ապահովման համար ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը:

Արթուր Պետրոսյան՝ Հնագիտության մասնագետը պատասխանատու է ՇՄԿՊ-ի իրականացման շրջանակներում շինարարության ընթացքում պատմամշակութային և հնագիտական հուշարձանները բացասական ազդեցությունից պաշտպանելու համար:

2.4 9 Ուղեանցեր (Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհներին)

2.4.1 Կապալառուի Առողջության և անվտանգության, բնապահպանության և սոցիալական հարցերի գծով աշխատակազմ

2.4.1.1 Ուղեանց Մ2 կմ13+029 ճանապարհահատվածում, Այնթափ և Մասիս քաղաք. Շինհրապարակի գլխավոր պատասխանատուն է աշդեկ Վիգեն Ավագյանը և բնապահպանության մասնագետն է Մինաս Մինասյանը, պատասխանատու բնապահպանության, արտակարգ իրավիճակների, առողջության և անվտանգության հարցերի կառավարման համար:

2.4.1.2 Ուղեանց Մ2 կմ21+800 (Մ2 Երևան-Արտաշատ) ճանապարհահատվածում Արաքսավան և Դիմիտրով համայնքներ. Շինհրապարակի գլխավոր պատասխանատուն է աշդեկ Վիգեն Ավագյանը, իսկ բնապահպանության մասնագետն է Ռուզաննա Ոսկանյանը, պատասխանատու բնապահպանության, արտակարգ իրավիճակների, առողջության և անվտանգության հարցերի կառավարման համար:

2.4.1.3 Ուղեանց Մ2 կմ10+943 ճանապարհահատվածում, Այնթափ. Շինհրապարակի գլխավոր պատասխանատուն է աշդեկ Գագիկ Գևորգյանը, իսկ բնապահպանության մասնագետն է Արշակ Պետրոսյանը, պատասխանատու բնապահպանության, արտակարգ իրավիճակների, առողջության և անվտանգության հարցերի կառավարման համար:

2.4.1.4 Ուղեանց Մ2 կմ22+850 ճանապարհահատվածում, Մասիս. Շինհրապարակի գլխավոր պատասխանատուն է աշդեկ Արտավազ Ստեփանյանը, իսկ բնապահպանության մասնագետն է Նարեկ Քոչարյանը՝ պատասխանատու բնապահպանության, արտակարգ իրավիճակների, առողջության և անվտանգության հարցերի կառավարման համար:

2.4.1.5 Ուղեանց Մ2 կմ25+630 ճանապարհահատվածում, Ագատավան. Շինհրապարակի գլխավոր պատասխանատուն է աշդեկ Արտավազ Ստեփանյանը, իսկ բնապահպանության մասնագետն է Նարեկ Քոչարյանը՝ պատասխանատու բնապահպանության, արտակարգ իրավիճակների, առողջության և անվտանգության հարցերի կառավարման համար:

2.4.1.6 Ուղեանց Մ2 կմ15+444 ճանապարհահատվածում, Մասիս և Մարմարաշեն, Մ2 կմ24+147 ճանապարհահատվածում, Բուրաստան, Մ2 կմ28+900, Արտաշատ. Շինհրապարակի գլխավոր պատասխանատուն է աշդեկ Մամվել Մարտիրոսյանը, իսկ բնապահպանության մասնագետն է Արմինե Հայրապետյանը՝ պատասխանատու

բնապահպանության, արտակարգ իրավիճակների, առողջության և անվտանգության հարցերի կառավարման համար:

2.4.1.7 Ուղեանց Մ1 կմ21+550 ճանապարհահատվածում, Աշտարակ. Շինհրապարակի գլխավոր պատասխանատուն է աշդեկ Մանվել Խաչատրյանը, իսկ բնապահպանության մասնագետն է Նարեկ Քոչարյանը՝ պատասխանատու բնապահպանության, արտակարգ իրավիճակների, առողջության և անվտանգության հարցերի կառավարման համար:

Մաս II Բնապահպանական Կառավարում

3. Բնապահպանական Անվտանգության Համակարգի Ծրագիր

3.1 Համապատասխանություն ազգային անվտանգության համակարգի հետ

3.1.1 Ազգային անվտանգության համակարգի և ազգային օրենսդրության հետ համապատասխանելու նպատակով՝ Կապալառուն ձեռք է բերել շինարարական աշխատանքներ սկսելու համար անհրաժեշտ թույլտվությունները և լիցենզիաները:

3.1.2 Որպես ակտիվ բնապահպանական գործողություններ իրականացնող տնտեսվարող սուբյեկտ, կապալառուները ԲՆ-ին պարբերաբար ներկայացնում են բնապահպանական հաշվետվություններ՝ ՀՀ օրենսդրության համաձայն: 2016թ-ի չորրորդ եռամսյակի համար եռամսյակային հաշվետվությունը Կապալառուն ներկայացրել է հաշվետու ժամանակահատվածում:

3.1.3 Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի և 9 ուղեանցերի կառուցման Կապալառուները անհրաժեշտ կապ են ապահովում տեղական (համայնքներ) և տարածքային կառավարման մարմինների (մարզերի) հետ՝ շինարարության ընթացքում համապատասխանելու համար ՀՀ օրենսդրությանը: Համայնքի ղեկավարի հետ կնքվել են 2 պայմանագրեր Լանջիկ համայնքի վարչական սահմաններում հողի բերրի շերտի ժամանակավոր կուտակման տարածքի վերաբերյալ: Լանջիկ համայնքի 2 տարածքներում հողի բերրի շերտի ժամանակավոր կուտակման հաստատումը ձեռք է բերվել Շիրակի մարզպետարանում: Պայմանագիր է կնքվել Մարալիկի քաղաքապետարանի հետ քաղաքային աղբավայր աղբը տեղափոխելու վերաբերյալ:

3.1.4 Բնապահպանական պարամետրերի՝ փոշու, ջրի, աղմուկի և վիբրացիայի թույլատրելի շեմերը, մոնիտորինգի համար, հաստատված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներով և նորմերով:

3.2 Համապատասխանություն ԱԶԲ Անվտանգության Համակարգի հետ

3.2.1 Որպեսզի շինարարական աշխատանքները իրականացվեն շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցությամբ, պահանջվել է, որ շինարարության իրականացումը համապատասխանի Տրանշ 3-ի (Թալին-Լանջիկ ճանապարհահատված) ՇՄԱԳ/ՇՄԿՊ-ի պահանջներին և Տրանշ 1-ի (9 ուղեանցեր) ՆԲԳ/ՇՄԿՊ-ի պահանջներին, որոնք մշակվել են ԱԶԲ Բնապահպանական քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3.2.2 Նախքան հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութերի տեղադրման համար որևէ տեղամասի շահագործումը՝ Կապալառուի կողմից պատրաստվում է Տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի կառավարման պլան, որը ներառում է տեղանքին բնորոշ բնապահպանական ազդեցություններ, ռիսկի գնահատում և մեղմացուցիչ միջոցառումներ, ուղղորդվելով ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչության անվտանգության բաժնի կողմից մշակված Բնապահպանական անվտանգության տեղեկատուով: ԾԻԿ-ը

ընդունել և պահանջել է, որպեսզի ինժեները և կապալառուն պահպանեն հետևյալ ընթացակարգերը՝ 1. Կապալառուն ընտրում է տարածք հողի բերրի շերտի կուտակման կամ հանված նյութերի տեղադրման համար, 2. Խորհրդատուի ԲՄ և ՀՄ մասնագետները այցելում են տեղամաս և տրամադրում Կապալառուին տեղամասի գնահատման հաշվետվություն տեղամասի օգտագործման սահմանված զգայուն ընկալիչներով և առաջարկներով, 3. Կապալառուն ապահովում է տեղամասը և պատրաստում է ՏՇՄԿՊ՝ հիմք ընդունելով գնահատման հաշվետվության արդյունքները և ներկայացնում է Խորհրդատուի հաստատմանը, 4. Խորհրդատուի ԲՄ-ը վերանայում է ՏՇՄԿՊ և Խորհրդատուն տրամադրում է հաստատում, 5. Կապալառուին տրվում է տեղամասը շահագործելու թույլտվություն: 9 ուղեանցերի կառուցման դեպքում անհրաժեշտություն չկա հողի բերրի շերտի կուտակման համար տարածք ընտրել և կազմակերպել ՀՄ-ի այցելությունը տարածք (հանված նյութերի տեղադրման վայրերը գտնվում են կառուցված և ձևափոխված տարածքներում): Ուղեանցի ՏՇՄԿՊ-ը ներառում է (հանված նյութերի տեղադրման վայրերի ռիսկերի գնահատումը և մեղմացուցիչ միջոցառումները):

3.2.3 Քանի որ Տրանշ 3-ը հանդիսանում է Ա կատեգորիայի ծրագիր՝ ԱԶԲ-ն շարունակում է իրականացնել ուսումնասիրության առաքելություններ առնվազն յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» գործողությունների համապատասխանությունը ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (2009թ.) պահանջների հետ ստուգելու նպատակով: ԱԶԲ-ն իրականացնում է առնվազն մեկ ուսումնասիրության առաքելություն 9 ուղեանցերի կառուցման ծրագրի համար, քանի որ այն համարվում է Բ կատեգորիայի ծրագիր: 2016թ. օգոստոսի 2-ին և 2016թ. հոկտեմբերի 21-ին ԱԶԲ-ը իրականացրել է վարկի միջոցների ուսումնասիրության առաքելություն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Թալին-Լանջիկ ճանապարհահատվածում և Ս2 Երևան-Արտաշատ և Ս1 Երևան-Աշտարակ ճանապարհների 9 ուղեանցերի կառուցման տեղանքում: 2016թ նոյեմբերի 29-ին այցելություն է կատարվել միայն ուղեանցերի կառուցման տարածքներ: Այցելությունների ընթացքում ուսումնասիրվել է դրանց համապատասխանությունը բնապահպանության տեսանկյունից:

3.3 Կապալառուի համապատասխանությունը ՇՄԿՊ-ի հետ

3.3.1 Բնապահպանական հարցերի իրականացումն ապահովելու համար Կապալառուն ուղղորդվում է ՇՄԱԳ-ով և ՇՄԿՊ-ով Տրանշ 3-ի համար, որպես Մրցույթի և Պայմանագրի փաստաթղթերի բաղկացուցիչ մաս: ՇՄԿՊ-ի հետ համապատասխանությունը պարբերաբար մոնիթորինգի է ենթարկվում և ներկայացվում է հաշվետվություն: Ինչպես սահմանված է Պայմանագրի փաստաթղթերում, Կապալառուից պահանջվում է մշակել Կապալառուի Շրջակա միջավայրի կառավարման պլան (ԿՇՄԿՊ), որը ներառում է Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի ծրագրի նկարագրությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակը, բնապահպանական առկա պայմանների, շինարարության ազդեցությունների գնահատման ու մեղմացուցիչ միջոցառումների նկարագրությունը, մոնիթորինգի, հանրային խորհրդատվությունների և Բողոքների լուծման մեխանիզմի (ԲԼՄ)

Ժամանակացույցը և պատասխանատվությունները, ինչպես նաև բնապահպանական խնդիրներին վերաբերող գնումների և հաշվետվողականության պատասխանատվությունները: 2016թ. օգոստոսին ԿՇՄԿՊ-ի առաջին տարբերակը ներկայացվել է ինժեներին և պայմանական հաստատվել է: Չնայած ԿՇՄԿՊ-ը հաստատվել էր, այն լրացուցիչ վերանայման և փոփոխման կարիք ունի՝ ըստ ԾԿԽ/Ինժեների և ԾԻԿ ներկայացված դիտողությունների ու առաջարկությունների ԱԶԲ-ի Անվտանգության համակարգի պահանջներին համապատասխանելու համար: ԾԿԽ/Ինժեները և ԾԻԿ-ը իրենց դիրքորոշումը հայտնել են պաշտոնական գրությամբ, շաբաթվա կտրվածքով պարբերաբար տեղի ունեցող հանդիպումների, ինչպես նաև բնապահպանական հարցերի հետ կապված հանդիպումների ընթացքում: Տրամադրվել է անհամապատասխանության մասին ծանուցում: Ի վերջո, հաշվի առնելով ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները, ԿՇՄԿՊ-ն փոփոխվել, ներկայացվել և պայմանականորեն հաստատվել է Ինժեների կողմից (Վերջնաժամկետը՝ 2017թ. հունվարի 30):

3.3.2 Նախքան շինարարության մեկնարկը Կապալառուն Լանջիկ համայնքում իրականացրել է հանրային լուսավորության տարածման և հանրության մասնակցության վերաբերյալ ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության պահանջներին (2009թ.) համապատասխանելու նպատակով:

3.3.3 Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհահատվածներում 9 ուղեանցերի կառուցման աշխատանքներն իրականացնող կապալառուների կողմից մշակված ՏՇՄԿՊ-ը հաստատվել են:

3.4 Հանքերի, պայթեցման աշխատանքների, հանված անօգտագործելի նյութի տեղադրման և հողի բերրի շերտի կուտակման վայրերի, բետոնի գործարանների և պատմական հուշարձանների համար տեղանքին բնորոշ բնապահպանական կառավարման պլանների հաստատումներ

Թալին-Լանջիկ ճանապարհահատված

3.4.1 ԾԿԽ/Ինժեների Բնապահպանության գծով մասնագետի և Հնագիտության մասնագետի կողմից իրականացվել են այցելություններ հանված անօգտագործելի նյութի և կտրված հողի բերրի շերտի կուտակման համար Կապալառուի կողմից առաջարկվող տեղամասերը գնահատելու նպատակով: Գնահատումը ցույց է տվել, որ չկան էական բնապահպանական և հնագիտական խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել տեղամասերի օգտագործումը առաջարկվող նպատակների համար:

3.4.2 Հողի բերրի շերտի կուտակման վայրերը ըստ Տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի կառավարման պլանները՝ Լանջիկ 1-ը (կմ87+700) և Լանջիկ 4-ը (կմ87+000) պատրաստվել և ներառվել են ԿՇՄԿՊ-ում: Դրանք հաստատվել են ԿՇՄԿՊ-ի պայմանական հաստատման հետ միասին, իսկ վերջնական ԿՇՄԿՊ-ի համար սահմանված վերջնաժամկետը չպահպանելու դեպքում Ինժեները կհաստատի ՏՇՄԿՊ-երը ԿՇՄԿՊ-ից առանձին: Երկու նշված տեղամասերը օգտագործվում են Կապալառուի կողմից:

3.4.3 Կապալառուն Լանջիկ համայնքում օգտագործել է հանված անօգտագործելի նյութի 1 տեղադրման վայր՝ Լանջիկ 2 (կմ 88+500): Կապալառուն պահանջել է ներկայացնել հանված նյութի տեղադրման վայրի վերջնական ՏՇՄԿՊ-ն և դեռ սպասում է պատասխանի:

3.4.4 Հանված նյութի տեղադրման և հողի բերրի շերտի կուտակման վայրերի կարգավիճակը, և ՏՇՄԿՊ-երը ներկայացված են ստորև՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

N	Տեղանքի անվանումը	Նպատակը	Հաստատված ՏՇՄԿՊ (Այո/Ոչ)	Աշխատանքների կարգավիճակը	
				Սկսվել են	Չեն սկսվել
1	Լանջիկ -1 ԲՇԿՎ	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո/ պայմանական հաստատում		
2	Լանջիկ -2 ՀՆՏՎ	Հանված նյութի տեղադրման վայր	Ոչ/տրամադրվել է ՏՇՄԿՊ-ի նախագիծ		
3	Լանջիկ -4 ԲՇԿՎ	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո/ պայմանական հաստատում		

3.4.5 Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուն իրականացրել է Դ դասի կառուցվածքային բետոնյա, բետոնի նախապատրաստման, ջրթող կառուցվածքների ճանապարհը հատող ջրանցումները ապահովելու համար ջրամեկուսացման (2 շերտ բիտում) աշխատանքներ՝ օգտագործելով բետոնե նյութեր, որը մատակարարվել է Մարալիկի բետոնի արտադրման գործարանից: Մարալիկի բետոնի արտադրման գործարանի համար ՏՇՄԿՊ-ի վերջնական տարբերակը դեռ պատրաստ չէ: Բետոնի արտադրման գործարանի համար ՏՇՄԿՊ-ի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2017թ. հունվարի 30-ը:

3.4.6 Կապալառուն Մարալիկում Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի աշխատանքների համար օգտագործել է շինարարական ճամբարի համար տարածք: Կապալառուից պահանջվել է հիմնել առանձին շինարարական ճամբար Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի համար և ներկայացնել մոբիլիզացման նոր ծրագիր Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի համար: Կապալառուն ԾԿԽ/Ինժեների հաստատմանը

դեռևս չի ներկայացրել ՏՇՄԿՊ շինարարական ճամբարի համար: Շինարարական ճամբարի ՏՇՄԿՊ-ի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2017թ. հունվարի 30-ը:

3.4.7 Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուն իրականացրել է լիցքի աշխատանքներ: Կապալառուն չի տրամադրել որևէ տեղեկատվություն նշված լիցքի աշխատանքների համար օգտագործված նյութերի աղբյուրի վերաբերյալ, արդյոք այդ նյութը վերցվել է հանույթից, գոյություն ունեցող հանքերից, թե նոր բացվածից: Կապալառուն բազմիցս դիմել է ԾԻԿ/Ինժեներին՝ խնդրելով աջակցել հանքերի օգտագործման համար անրհաժեշտ օրինական թույլտվություններ ստանալու հարցում: Ի պատասխան՝ աջակցությունը տրամադրվել է ՀՀ իրավական պահանջների վերաբերյալ խորհրդատվության տեսքով, և Կապալառուին առաջարկվել է, պահպանելով իրավական պահանջները, ձեռք բերել թույլտվություն նոր հանքի օգտագործման համար կամ պայմանագիր կնքել ՀՀ շուկայում առկա մատակարարի հետ: Լիցքի նպատակով շինարարական նյութերի ձեռք բերելու աղբյուրների վերաբերյալ տվյալներ տրամադրելու վերջնաժամկետ է սահմանված 2017թ. հունվարի 30-ը:

9 ուղեանցերի կառուցում U2 Երևան-Արտաշատ և U1 Երևան-Աշտարակ ճանապարհներին

3.4.8 U2 Երևան-Արտաշատ և U1 Երևան-Աշտարակ ճանապարհների 9 ուղեանցերի կառուցման համար ուղեանցերի կառուցման աշխատանքներն իրականացնող կապալառուների կողմից մշակված ՏՇՄԿՊ-ները հաստատվել են:

3.5 ԱԶԲ Առաքելություն

3.5.1 ԱԶԲ Աուդիտի առաքելությունը տեղի է ունեցել 2016թ. օգոստոսի 2-ին և 2016թ. հոկտեմբերի 21-ին ծրագրի գործունեությունը ԱԶԲ Անվտանգության քաղաքականության (2009) պահանջների հետ ստուգելու նպատակով: Առաջին առաքելության մեջ ներգրավված էր ԱԶԲ-ի Ավագ բնապահպանական մասնագետը, իսկ երկրորդ առաքելության մեջ՝ ԱԶԲ Ազգային բնապահպանական խորհրդատուն: Երկու առաքելությունների այցելություններին մասնակցել են ԾԻԿ-ի, ԾԿԽ/Ինժեների, ինչպես նաև Կապալառուի ներկայացուցիչները: Մեկ այլ համատեղ այց է կազմակերպվել Թալին-Լանջիկ ճանապարհահատվածում Ազգային բնապահպանական խորհրդատուի հետ միասին՝ ընթացիկ իրավիճակը մշտադիտարկելու նպատակով, ինչպես որ պահանջել էր Ծրագրի Աշխատանքային խմբի ղեկավարը 2016թ. դեկտեմբերի 12-ին:

3.5.2 Թալին-Լանջիկ ճանապարհահատված. Նախքան շահագործումը բետոնի արտադրման գործարանը պետք է ունենա պատշաճ ջրահեռացում, ՏՇՄԿՊ պետք է մշակվի հիմնվելով ԾԿԽ/Ինժեների դիտողությունների ու առաջարկությունների վրա, իսկ շինարարական ճամբարի ճանապարհների ծածկը պետք է բարեկարգվի, որպեսզի ցեխը և տիղմը չներթափանցեն մայրուղու և տեղական նշանակության ճանապարհների վրա:

3.5.3 9 ուղեանցերի կառուցում U2 Երևան-Արտաշատ և U1 Երևան-Աշտարակ ճանապարհներին. Ուղեանցների և կամուրջների կառուցման հատվածներում պետք է

շուտափույթ և պատշաճ կերպով լուծվեն նախագրուշացման նշանների, արագության սահմանափակման նշանների տեղադրման, աշխատողների առողջապահական և անվտանգության միջոցառումների, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում լուսավորության իրականացման աշխատանքները: Ուղեանցների և կամուրջի աշխատանքների ՏՇՄԿՊ-ում պետք է ներառվեն ճանապարհային անվտանգության միջոցառումները:

3.6. Վերապատրաստման դասընթացներ և իրազեկվածության բարձրացման ուղղվածություն

3.6.1 Թային-Լանջիկ ճանապարհահատված.

3.6.1.1 ԱԶԲ-ի բնապահպանական, առողջապահության և անվտանգության պահանջների հետ կապված ԾԿԽ աշխատակազմի հետ պարբերաբար իրականացվել են իրազեկվածության բարձրացման քննարկումներ և բնապահպանության տեսանկյունից համապատասխանության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:

3.6.1.2 Բնապահպանական համապատասխանության վերապատրաստման դասընթացներն անց են կացվել Կապալառուի շինհրապարակում 2016թ. հուլիսի 29-ին, 2016թ. սեպտեմբերի 24-ին և 2016թ. նոյեմբերի 25-ին: Դասընթացների ընթացքում ներկայացվել են ԱԶԲ-ի բնապահպանական և առողջապահության և անվտանգության մեխանիզմների և ՀՀ օրենսդրության պահանջները, ՇՄԿՊ-ում նախատեսված միջոցառումները և մոնիթորինգի արդյունքները, ինչպես նաև հնագիտական պատահական գտածոների ընթացակարգը: Դասընթացներին մասնակցել են Կապալառուի և Էնթակապալառուի աշխատողները, վարորդները և ղեկավար անձնակազմը: Դասընթացը կազմակերպվել էր Կապալառուի բնապահպանական թիմի կողմից վերահսկողության խորհրդատուի բնապահպանության մասնագետի հետ միասին:

3.6.1.3 Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար իրականացվել են նաև անվտանգության վերաբերյալ իրազեկվածության լրացուցիչ դասընթացներ վարորդների, մեքենասարքավորումների վրա աշխատող օպերատորների և շինհրապարակում աշխատող մարդկանց համար՝ աշխատանքի ընթացքում անվտանգության ապահովումը բարելավելու նպատակով:



3.6.2 9 ուղեանցերի կառուցում Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհներին

3.6.2.1 Շինարարական աշխատանքների սկզբում բոլոր 4 կապալառուների բնապահպանության մասնագետները, որպես ՏՄԿՊ-ի մաս, աշխատակիցներին ներկայացրել են արտակարգ իրավիճակների դեպքում, աշխատատեղում առողջության և անվտանգության, բնապահպանական հարցեր լինելու դեպքում իրականացվելիք ընդհանուր միջոցառումները: Ինչպես նաև աշխատողների հետ անհատական հանդիպումների ընթացքում պարբերաբար իրականացվել է խորհրդատվություն: Աշխատողները պարբերաբար հսկողության տակ են եղել՝ ՏՄԿՊ-ում սահմանված պահանջներն ապահովելու նպատակով:

3.7. Հնագիտական աշխատանքների ծրագիր (Թալին-Լանջիկ ճանապարհահատված)

3.7.1. Շինարարական աշխատանքներն իրականացվել են Լանջիկ հնագիտության համալիրի պահպանության գոտու տարածքում (կմ86+000-կմ89+740): ՀՀ մշակույթի նախարարությունից ստացվել է շինարարական աշխատանքներ սկսելու վերաբերյալ թույլտվություն՝ պայմանով, որ այդ հատվածի շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն հնագիտության փորձագետի վերահսկողությամբ: Շինարարական աշխատանքները իրականացվել են հնագիտության փորձագետի վերահսկողությամբ:

3.7.2. Ճանապարհի ծրագծով տեղակայված հնագիտական պեղումներ իրականացնելու տարածքների վրա ազդեցության ծավալը հասկանալու նպատակով՝ ձեռնարկվել է համապատասխան դաշտային ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու գնման գործընթաց: Ուսումնասիրության նպատակն է՝ հասկանալ Թալին-Լանջիկ


ճանապարհահատվածի (կմ71+500-կմ90+200) հնագիտական տեսակետից զգայուն տարածքների վրա շինարարական աշխատանքների անմիջական ազդեցության ծավալը:

3.7.3. Որևէ շինարարական աշխատանք չի իրականացվել հնագիտական տեսակետից զգայուն այլ տարածքների շրջակայքում:

3.8. Բողոքների լուծման մեխանիզմ և խորհրդատվություն

3.8.1. Հիմնվել է Բողոքների լուծման մեխանիզմ՝ անդրադառնալու համար նորմայից բարձր քանակով փոշու, աղմուկի, թափոնների ոչ ճիշտ կուտակման և բնապահպանական այլ հարցերին առնչվող բողոքներին/առաջարկություններին: Բողոքների լուծման մեխանիզմը լրացնում է առկա նամակների կամ անձնական դիմումների միջոցով դիմելու մեխանիզմներին, որը հիմնվել է տեղական իշխանությունների կողից:

Բողոքների ընթացակարգը և դրանց լուծման մեխանիզմի փուլերը ներկայացված են պատկեր 2-ում:



Պատկեր 2. Բողոքների ընթացակարգ և դրանց լուծման մեխանիզմ

3.8.2 Հաշվետու ժամանակաշրջանում Կապալառուները նախքան շինարարության մեկնարկը կազմակերպել են հանդիպումներ՝ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Այդ հանդիպումների նպատակն էր՝ տեղեկացնել ծրագրի ազդեցության ենթակա համայնքների անդամներին շինարարական աշխատանքների

իրականացման ընթացքում հնարավոր շրջակա միջավայրի վրա ազդեցության և սոցիալական ազդեցությունների և անվտանգության խնդիրների մասին: Հանրությանը ներկայացվեցին նախատեսված շինարարական աշխատանքները, դրանցից բխող հնարավոր շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, իրականացվելիք մեղմացուցիչ միջոցառումները և բողոքների լուծման մեխանիզմը: Յուրաքանչյուր ազդակիր համայնքի համայնքապետի գրասենյակում պահվում է բողոքների գրանցամատյան, որը հասանելի է համայնքի անդամների համար: Նաև յուրաքանչյուր համայնքում փակցված են պաստառներ, որոնք պարունակում են կոնտակտային տվյալներ, որոնցով կարելի է դիմել խախտումների դեպքում: Բողոքների հավաքագրմամբ զբաղվող պատասխանատու ներկայացուցչի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և անունը նշված են պաստառների վրա: Պաստառների վրա նշված է նաև, որ պատճառված անհարմարությունները ժամանակավոր բնույթ են կրում:

3.8.2.1 Թային-Լանջիկ ճանապարհահատված. Հաշվետու ժամանակաշրջանում Կապալառուն նախքան շինարարության մեկնարկը Լանջիկ համայնքում 2016թ. հուլիսի 29-ին կազմակերպել է հանդիպում՝ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Այդ հանդիպման ընթացքում քննարկված հարցերը մանրամասն ներկայացված են 2016թ. օգոստոս ամսվա Կապալառուի Սոցիալական հարցերի ամսական հաշվետվության մեջ: Արևիկ Սինդոյանը՝ Կապալառուի Սոցիալական ազդեցության մասնագետը պատասխանատու է Ծրագրի գործունեության վերաբերյալ մտահոգությունների հավաքագրման համար: Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նախքան շինարարության մեկնարկը հանրության իրազեկվածության բարձրացման հանդիպում կկազմակերպվի Մարայիկ քաղաքում բետոնի արտադրման գործարանի շահագործման վերաբերյալ:

3.8.2.2 9 ուղեանցերի կառուցում Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհներին

3.8.2.2.1 Ուղեանց Մ2 կմ13+029 ճանապարհին, Այնթափ և ք.Մասիս. Հանրային խորհրդատվությունը տեղի է ունեցել Մասիս համայնքում 2016թ. հուլիսի 24-ին:

3.8.2.2.2 Ուղեանց Մ2 կմ21+800 ճանապարհին, Արաքսավան և Դիմիտրով համայնքներ. Հանրային խորհրդատվությունը տեղի է ունեցել Դիմիտրով համայնքում 2016թ. հունիսի 24-ին:

3.8.2.2.3 Ուղեանց Մ2 կմ10+943 ճանապարհին, Այնթափ. Հանրային խորհրդատվությունը տեղի է ունեցել Այնթափ համայնքում 2016թ. օգոստոսի 26-ին:

3.8.2.2.4 Ուղեանց Մ2 կմ22+850 ճանապարհին, ք.Մասիս. Հանրային խորհրդատվությունը տեղի է ունեցել Մասիս համայնքում 2016թ. սեպտեմբերի 19-ին:

3.8.2.2.5 Ուղեանց Մ2 կմ25+630 ճանապարհին, Ազատավան. Հանրային խորհրդատվությունը տեղի է ունեցել Ազատավան համայնքում 2016թ. սեպտեմբերի 7-ին:

3.8.2.2.6 Ուղեանց U2 կմ15+444 ճանապարհին, Մասիս և Մարմարաշեն. Հանրային խորհրդատվությունը տեղի է ունեցել Մարմարաշեն համայնքում 2016թ. հուլիսի 27-ին:

3.8.2.2.7 Ուղեանց U2 կմ24+147 ճանապարհին, Բուրաստան. Հանրային խորհրդատվությունը տեղի է ունեցել Բուրաստան համայնքում 2016թ. հուլիսի 28-ին:

3.8.2.2.8 Ուղեանց U2 կմ28+900 ճանապարհին, Արտաշատ. Հանրային խորհրդատվությունը տեղի է ունեցել Բուրաստան համայնքում 2016թ. հուլիսի 29-ին:

3.8.2.2.9 Ուղեանց U1 կմ21+550 ճանապարհին, Աշտարակ. Հանրային խորհրդատվությունը տեղի է ունեցել Բուրաստան համայնքում 2016թ. նոյեմբերի 1-ին:

3.8.3 Ներկա դրությամբ բնապահպանական հարցերի վերաբերյալ որևէ բողոք և/կամ առաջարկ Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի և 9 ուղեանցերի շինարարական աշխատանքների հետ կապված չեն գրանցվել:

3.9. Կապ

3.9.1 Հաշվետու ժամանակաշրջանում կապը ԾԻԿ, ԾԿԽ և Կապալառուի բնապահպանական խմբի հետ իրականացվել է պաշտոնական գրությունների և էլեկտրոնային նամակագրության, հեռախոսագանգերի և հանդիպումների միջոցով: Մասնավորապես, բարձրացվել և քննարկվել են հետևյալ հարցերը.

3.9.1.1 Թալին-Լանջիկ ճանապարհահատված

- ԱԶԲ առաքելության այցելություն,
- Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի ԿՇՄԿՊ-ի արդիականացում,
- փոշու, աղմուկի, ջրի որակի և վիբրացիայի սարքավորումներով/գործիքային չափումներ,
- հողի բերրի շերտի կուտակման և հանված անօգտագործելի նյութերի տեղադրման վայրերի ՏՇՄԿՊ,
- կրկնվող անհամապատասխանություններ, որոնք արձանագրվել են մոնիթորինգի ընթացքում և ուղղիչ գործողություններ,
- բնապահպանական/առողջապահության և անվտանգության վերապատրաստման դասընթացներ կապալառուի և ենթակապալառուի բոլոր հին և նորանշանակ աշխատակիցների համար,
- օտարման շերտից դուրս տարածքների առանց թույլտվության օգտագործում,
- լիցքի համար օգտագործվող նյութի աղբյուրների մասին տեղեկատվության բացակայություն,
- շաբաթական մոնիթորինգի և ամսական հաշվետվությունների չներկայացում,
- այլ ընթացիկ հարցեր:

3.9.1.2 9 ուղեանցերի կառուցում U2 Երևան-Արտաշատ և U1 Երևան-Աշտարակ ճանապարհներին

- ԱԶԲ առաքելության այցելություն,
- ՏՇՄԿՊ-երի պատրաստում,
- հանված նյութի տեղադրման վայրերի նույնականացում և հաստատում,
- մոնիթորինգի այցելությունների արդյունքները,
- այլ ընթացիկ հարցեր:

Մաս III Բնապահպանական մոնիթորինգ

4. Մոնիթորինգ

4.1.1 Թալին-Լանջիկ ճանապարհահատված. Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար իրականացվել է մոնիթորինգ՝ ըստ մոնիթորինգի ծրագրի, որը մշակվել է՝ հիմք ընդունելով ԱԶԲ անվտանգության քաղաքականությունը և ՇՄԿՊ-ի պահանջները: Մոնիթորինգի ծրագիրը ներառում է:

- (1) Կանոնավոր մոնիթորինգ այցեր ամսական կտրվածքով ստուգելու համար շինարարական աշխատանքների համապատասխանությունը ՇՄԿՊ-ի պահանջներին, ինչպես նաև հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութի տեղադրման մոնիթորինգ;
- (2) Չծրագրված ստուգողական այցեր, անհրաժեշտության դեպքում;
- (3) Աղմուկի և վիբրացիայի, ջրի, օդի որակի բնապահպանական մոնիթորինգ և գործիքային չափումներ;
- (4) Մոնիթորինգի ստուգաթերթիկի լրացում և համապատասխանությունների և անհամապատասխանությունների ամփոփում;
- (5) Անհամապատասխանության ծանուցումների ներկայացում Կապալառուին;
- (6) Մոնիթորինգի տվյալների հավաքագրում և դրանց տրամադրումը ԾԿՄՀ-ին
- (7) Կապալառուի շաբաթական մոնիթորինգի հաշվետվությունների վերանայում:

4.1.2 Ուղեանցերի կառուցում Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհներին. Մոնիթորինգի ծրագիրը ներառում է:

- 1) Կանոնավոր մոնիթորինգ այցեր ամսական կտրվածքով ստուգելու համար շինարարական աշխատանքների համապատասխանությունը ՇՄԿՊ-ի պահանջներին, ինչպես նաև հանված նյութի տեղադրման մոնիթորինգ;
- 2) Չծրագրված ստուգողական այցեր, անհրաժեշտության դեպքում;
